տիով, առ տեարս Գոնեցփոլսքիս պատշաճեցեալ, հեռի ի Գամենիցու միով մղոնաւ։ Անդ ժամանեալք՝ համարէաք զպանդոկ իմն գտանել, որպէս ասէին, և ահա կիսախրամ և տիղմն ի նմին, Հրէից ևեթ պատկան անդր բնակողաց. ապա ինքնին որոնեալ ընդ գեօղն, զի ուղեկիցքն չեւ եւս էին ժամանեալք, խոտորեցայ առ չինական ոմն՝ Ֆէտուր կոչեցեալ. որ գթով ընկալեալ մարդասիրեաց, և վառմամբ հնոցի ցամաքեցոյց զզգեստս. եգիտ և ըզդարեջուր ազնիւ յոյժ, զորպիսի ի Լէսպոլսոյ ցարդ ոչ ուրեք տեսի. զոր ըմռուցեալ բրդեցելով հացիւ փափկապէս՝ կուրինք և անդորրացաք, մինչև դադարեաց անձրեւն և ցրուեցան ամպք։ Անդուստ՝ ոչ սպասելով ուղեկցաց՝ ելի, և ի հասարակ աւուրն ժամանեցի ի Գամենից. և զի այլափոխեցեալ էր յաւերածոյն, հպիւ ճանաչէի զփողոցս։ Ի Առաջնորդութեամբ ումեմն տեղացւոյ ժամանեցի յեկեղեցի Սրբոյն Նիկողայոսի, որ է հոգաբարձական Հայոց, և պատուասիրաբար ընկալեալ ի գերյարգելւոյ Տեառն Միքաէլէ Մուրաթեան՝ յեղբօրէ Նօտարին իմոյ հանգուցելոյ, մնացի ի բնակութեան նորա, հուպ եկեղեցւոյն։ Ատ լու եղեւ մերայնոց գալուստ իմ, և խուռն ընթացեալք արք և կանայք, ուրախութեամբ արտասուօք փարէին զինեւ. զի լուեալք էին թէ կորուսեալ իցէի, և թէ ի Սվէտաց կալանաւորեցեալ կամ սպանեցեալ։ Զուարճացայ և ես ի տեսանելն զխաչինս իմս, և ի ցոյցս սիրոյ նոցա առ հովիւ իւրեանց. և մնացի յայնմ բնակութեան իբրեւ զեօթնեակս չորս։ Եւ զի տեղին խարխալեցեալ էր, և սորէին խիճք և փոշիք ի տանեաց և յորմոց ի տուն անդր, հրաւիրեցեալ ի Բան Թոմասէ Ադէնթովից Շէտմէնգիք յորջորջեցելոյ, ի 17 հոկտեմբերի գնացի բնակել ի սենեկին՝ որ ընդ պատուարաւ տան նորա. որոյ մայրն այրի և բարեպաշտուհի Սոֆիայ՝ ոգւով չափ տածէ և խնամէ զպանդխտութիւնս իմ։